Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Կ. Կոստանյան

Երևանի Մ. Խորենացու անվան հ. 143 հիմն. դպրոցի VI$^{ա}$ դասարանի դասղեկ Ա. Սահակյանի տարեկան աշխատանքային պլան

2023-2024 ուստարի

Դասարանի նկարագիրը --- Դասարանում սովորում է 20 աշակերտ:Բոլորն էլ աշխատասեր են,սիրով են կատարում բոլոր հանձնարարությունները: Ընկերասեր են և պարտաճանաչ: Ուստարվա ընթացքում նախատեսվում է հատկապես մեծ ուշադրություն դարձնել անհատի ինքնուրույն մտածողության ձևավորման,դատողություններ և եզրակացություններ կապարելու կարողություններն ու հմտությունները զարգացնելու վրա;Նախատեսվում է կազմակերպել այցելություններ մշակութային օջախներ,գրքի քննարկումներ, զրույցներ հայրենիքի, ազնվության, բարության, ներողամտության մասին:Հայրենաճանաչության նպատակով կկազմակերպվեն այցելություններ պատմական մշակութային օջախներ:

Գեղագիտական դաստիարակություն _____ Աշակերտների գեղագիտական ճաշակը բարձրացնելու,գեղեցիկի հանդեպ սեր արթնացնելու նպատակով կկազմակերպվեն այցելություններ մշակութային օջախներ,պատկերասրահ, կդիտեն ներկայացում: Կկազմակերպվեն նաև կարդացած գրքի քննարկումներ, ասմունքի ժամեր:Կազմակերպել դասական երաժշտության ունկնդրում:

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն _____ Աշակերտների մեջ հայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով կազմակերպել զրույցներ հայրենիքի, հայրենասիրության մասին:Զրուցել Հայոց բանակի օրվա,ազատության, հայրենասիրության մասին:Նշել Հայոց բանակի օրը:

Հայրենիքը ճանաչելու նպատակով կազմակերպել այցելություններ պատմամշակութային օջախներ:Կազմակերպել հայրենի բնաշխարհի ճանաչողական էքսկուրսիաներ:

Բնապահպանական դաստիարակություն _____ Աշակերտների մեջ բնության նկատմամբ սեր և հոգատարություն զարգացնելու նպատակով զրուցել բնության դերի, նշանակության մասին:Սովորեցնել մաքուր պահել բնությունը ,հոգ տանել նրա մասին;Ստեղծել կանաչ անկյուն և մշակել բույսերը:Բնության բազմազան աշխարհը ճանաչելու համար դիտել ֆիլմեր, այցելել բուսաբանական այգի:

Աշխատանքային դաստիարակություն _____ Կարևորել շրջակա միջավայրի մաքրությունը,մասնակցել դպրոցում կազմակերպվող աշխատանքներին, շաբաթօրյակներին:

Ուստարվա ընթացքում դասեր կլսեմ դասարանում դասավանդող ուսուցիչների մոտ:

Ծնող- ուսուցիչ կապը ապահովելու նպատակով կկազմակերպվեն ծնողական հանդիպումներ և ժողովներ:

Կանցկացվեն դասղեկի ժամեր, որի ժամանակ կզրուցենք ազնվության, ընկերասի-րության, ներողամտության,քաղաքավարության, պատասխանատվության և այլ թեմաներով:

# 2023-2024 ուստարում կազմակերպվող միջոցառումներ,այցելություններ մշակութային օջախներ

| | | |
|---|---|---|
| 1. | Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում | Սեպտեմբեր |
| 2. | Անկախության օրվան նվիրված միջոցառում | Սեպտեմբեր |
| 3. | Կարդացած գրքի քննարկում | Շարունակական |
| 4. | Թարգմանչաց տոնին նվիրված միջոցառում | Հոկտեմբեր |
| 5. | Թատերական ներկայացման դիտում | Հոկտեմբեր |
| 6. | Այցելություն Էրեբունի թանգարան | Հոկտեմբեր |
| 7. | Այցելություն Մ. Սարյանի տուն- թանգարան | Նոյեմբեր |
| 8. | Երբ գալիս է Ամանորը | Դեկտեմբեր |

| | | |
|---|---|---|
| 9. | Հայոց բանակին նվիրված դաս- միջոցառում | հունվար |
| 10. | Մայրենիի օր | Փետրվար |
| 12. | Գիրք նվիրելու օր | Փետրվար |
| 13. | Մայրության և գեղեցկության օրվան նվիրված ասմունքի ժամ | Մարտ |
| 14. | Այցելություն էջմիածին | Մարտ |
| 15. | Այցելություն պատանի հանդիսատեսի թատրոն | Ապրիլ |
| 16. | Զատկի տոնին նվիրված միջոցառում | Ապրիլ |
| 17. | Դասական երաժշտության ունկնդրում | Մայիս |
| 18. | Իմ հայրենիք/ հայրենասիրական բանաստեղծությունների ասմունքի ժամ, շարադրության մրցույթ/ | Մայիս |
| 19. | Ուսումնական տարվա ամփոփում՝ ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին | Մայիս |